

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԳԱԼՈՅԱՆ ՆԱԻՐԱ ԱԹԱԲԵԿԻ

**ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր **Ի. Կ. Կարապետյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր **Ա. Օ. Թովուզյան**

մանկավարժական գիտությունների
թեկնածու **Լ. Մ. Պողոսյան**

Առաջատար կազմակերպություն՝

**Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 25-ին ժամը՝ 14⁰⁰ -ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՂ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. սեպտեմբերի 25-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ինչպես հայտնի է, առողջաբանական մոտեցումը ձևավորվել է տարբեր գիտությունների շրջանակներում և նախնական շրջանում այն հիմնվել է բժշկագիտության վրա: Մարդիկ դեռ հին ժամանակներում գիտակցել են մարդու առողջության նշանակությունը թե՛ մտավոր, թե՛ հոգևոր զարգացման գործում: Խորհրդային դպրոցում պարտադիր առարկա է եղել «Դպրոցական առողջապահությունը»: Շատ մանկավարժներ մինչև հիմա էլ մարդու առողջ կենսակերպի կազմակերպումը կապում են մարմնամարզության հետ: Սակայն առողջության մշակույթը բավականին բարդ, բազմաբովանդակ, ինչ-որ տեղ լայնածավալ հասկացություն է:

Կարելի է պնդել, որ մանկավարժական առողջաբանությունը հիմնվում է թե՛ բնագիտական, թե՛ հասարակագիտական գիտական հետազոտությունների և գիտափորձերի վրա: Կարևոր են ոչ միայն բժշկական-հիգիենիկ, այլև էկոլոգիական հետազոտությունները:

Դրա հետ մեկտեղ, բնակչության առողջությունն արտացոլում է մարդկային հասարակության զարգացման պատմությունը: Կարևոր է պարզել, թե ինչ դեր է խաղում մանկավարժական առողջաբանությունն ընդհանրապես ոչ միայն դաստիարակության և ուսուցման, այլև բնակչության առողջության բարելավման գործում: Ոչ ոք չի կասկածում, որ հենց դպրոցում են դրվում մարդու առողջ կենսակերպման գիտական հիմքերը: Թե՛ համաշխարհային, թե՛ հայրենական դպրոցների պատմությունը ցույց է տալիս, որ առողջության հիմնախնդիրն իր արտացոլումն է գտել ոչ միայն տարբեր գիտակարգերում /մարդու անատոմիա, կենսաբանություն, էկոլոգիա, բժշկագիտություն, գենետիկա և այլն/, այլև հանրակրթական առարկաներում /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և այլն/:

Վալերոլոգիա տերմինը վերցրած է լատ. valeo - առողջ լինել բառից և նշանակում է՝ «առողջության բժշկություն»: Պրոֆեսոր Ի. Ի. Բրեխմանն է առաջարկել այդ տերմինը՝ 1987թ-ին: Լինելով ներառական գիտություն, այն ձևավորվել է էկոլոգիայի, կենսաբանության, հոգեբանության, բժշկության, ֆիզիկական կուլտուրայի տեսության և պրակտիկայի և այլ գիտությունների հիման վրա:

Ի. Ի. Բրեխմանը հիմնավորել է առողջաբանության հիմնական սկզբունքները (И. И. Брехман, 1987): Ա. Յ. Գրիգորյանը (2006) վերլուծել է երիտասարդի առողջ կենսակերպի արժեքային կողմնորոշման ձևավորման հոգեբանական գործոնները, Ա. Օ. Թոփուզյանը (2009) ներկայացրել է մանկավարժական առողջաբանության

հունանիստական հայեցակերպը:

Մանկավարժական առողջաբանության արժեքանական հայեցակետին են անդրադարձել Ռ. Բ. Վենդրովսկայան (P. B. Вендровская, 1995), Ջ. Ի. Ռավկինը (Յ. И. Равкин, 1995), Ի. Կ. Կարապետյանը (1995), Բ. Գ. Կորնետովը (Г. Б. Корнетов, 1995):

Առողջ ապրելակերպի և կյանքի որակի խնդիրներին են անդրադարձել Ռ. Ա. Կումինսը (R. A. Cummins, 1997), Ե. Դիները (E. Diener, 2006), Դ. Ֆելսը և Յ. Պերին (D. Felce & J. Perry, 1996), Յ. Ս. Ֆլագոնը (J. C. Flanagan, 1982), Բարբարա Կ. Հասը (Barbara K. Haas, 1999), Ռ. Վինհովենը (R. Veenhoven, 1994) և այլոք:

Մանկավարժական առողջաբանության արդիական խնդիրներից է սովորողներին նոր առողջարարական տեխնոլոգիաներին ծանոթացումը: Պետությունը պիտի մշակի և իրականացնի լայնամասշտաբ առողջարարական ծրագրեր թե՛ դպրոցական, թե՛ արտադպրոցական համակարգերում: Մանկավարժական առողջաբանության հիմնական խնդիրներից է ոչ միայն առողջ և կենսունակ սերունդ դաստիարակելը, այլև պատրաստել նրան ապագայում տարբեր անբարենպաստ սոցիալ-տնտեսական, հոգեբանական, կենսաբանական պայմաններում ապրելու և գոյատևելու համար:

Մի կողմից, դպրոցականների մի մասը ուղղակիորեն զգում է իր մաշկի վրա անցումային շրջանի հետևանքները /ծնողների գործազրկություն, սուղ աշխատավարձ, գների շարունակական թանկացում, արտագաղթ, արտագնա աշխատանք/, մյուս կողմից, նրանք պիտի հաղթահարեն բազում դժվարություններ /տարիքային, հոգեֆիզիոլոգիական, ուսումնական, հարմարման/ բուն ուսումնառության և ընդհանրապես՝ սոցիալականացման գործընթացներում:

Կարևորագույն խնդիր է առողջությունն ուսուցիչների և աշակերտների շրջանում որպես բարձրագույն արժեք ներկայացնելը և արմատավորելը: Այստեղ անհրաժեշտ է ոչ թե վախ սերմանել հիվանդությունների, հիվանդանալու, այլ սեր սեփական և շրջապատող մարդկանց հանդեպ:

Ինչպես հայտնի է, առողջությունը կարևորագույն պայման է մարդու կենսագործունեության, նրա արագաշարժության, արագ և ժամանակին կողմնորոշվելու, ճիշտ որոշումներ ընդունելու, և, իհարկե, գեղեցիկ և հաճելի լինելու համար: Գաղտնիք չէ, որ ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում հնարավոր չէ աշխատանք ստանալ, հաջողության հասնել միայն գրագետ, բանիմաց, իրազեկ լինելով: Մասնագիտական տվյալների հետ մեկտեղ, ապագա մասնագետները պիտի ունենան գեղեցիկ մարմնի կառուցվածք, կազմվածք ու կեցվածք:

Առողջությունը կյանքում հաջողության հասնելու կարևորագույն պայմաններից և գործոններից մեկն է մնում:

Հատկանշական է այն փաստը, որ աշակերտների մեծ մասը բավականին լավ է պատկերացնում դպրոցական կրթության գործընթացում առողջաբանության խնդիրները: Անհրաժեշտություն է առաջանում շարունակական նրանց դրական գիտելիքներն ու պատկերացումները զարգացնել: Ասվածի տեսանկյունից կարևորվում է ուսուցիչների առողջաբանական իրազեկության զարգացման հիմնախնդիրը: Նրանք պիտի գիտական մոտեցում ցուցաբերեն ուսուցման և դաստիարակության բարդ գործընթացում աշակերտների և իրենց առողջության հարցերի նկատմամբ:

Կարևորվում է առողջության համար բարենպաստ շրջակա միջավայր ստեղծելու հիմնախնդիրը, քանի որ այն անմիջականորեն նպաստում է նրանց առողջության պահպանմանը, էկոլոգիական, ֆիզիկական և գեղագիտական դաստիարակությանը, և որ ամենակարևորն է՝ ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Առողջությունը գերագույն արժեք է: Ուսուցիչները պիտի զինված լինեն համապատասխան առողջաբանական գիտելիքներով, որպեսզի կարողանան դաստիարակել առողջ և գեղեցիկ սերունդ: Նրանք պիտի մշտապես հոգ տանեն ոչ միայն աշակերտների, այլև իրենց առողջությանը: Կարևորվում է ուսուցիչների և աշակերտների առողջաբանական գիտելիքների շարունակական զարգացման և հարստացման հարցը: Դրա հիմնական ուղիներից են.

- ա/ առողջաբանական ուղղվածություն ունեցող առարկաների հետևողականորեն ուսուցումը,
- բ/ միջառարկայական կապերի տեսանկյունից առողջաբանական հիմնախնդրի տարբեր ուսումնական իրադրություններում առանձնացումը,
- գ/ տվյալ հիմնախնդրի տարբեր տեսանկյուններից դիտարկումը, առողջաբանական ուղղվածության դասերի կազմակերպումը:

Հետազոտության նպատակն է բացահայտել «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի հոգեբանական և մանկավարժական առանձնահատկությունները և մշակել աշակերտների առողջաբանական, էկոլոգիական, հոգեբանական գիտելիքների շարունակական զարգացման հստակ ռազմավարություն:

Հետազոտության օբյեկտը ուսումնադաստիարակչական համակարգն է հիմնական դպրոցում:

Հետազոտության առարկան առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման մանկավարժական պայմանների ստեղծման հիմնախնդիրն է հիմնական դպրոցում:

Հետազոտության վարկածն է.

Եթե ստեղծվի աշակերտների ֆիզիկական, հոգեկան, մտավոր առողջության համար բարենպաստ մանկավարժական պայմաններ և մշակվի «Առողջ ապրելակերպ»

դասընթացի շրջանակներում աշակերտների առողջաբանական, էկոլոգիական, հոգեբանական գիտելիքների շարունակական զարգացման հստակ ռազմավարություն, ապա հնարավոր կլինի ավելի արդյունավետորեն լուծել սովորողների առողջ ապրելակերպին առնչվող հիմնական խնդիրները:

Չետագոտության առաջադիր խնդիրներն են.

1. Ուսումնասիրել «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման մեթոդներին, ընթացակարգերին վերաբերող ժամանակակից մանկավարժական, հոգեբանական, ֆիզիոլոգիական, բժշկաբանական, առողջաբանական հիմնական տեսությունները և հայեցակարգերը:

2. Բացահայտել «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման մանկավարժահոգեբանական, էկոլոգիական, առողջաբանական տեսական և մեթոդա-բանական հիմքերը:

3. Մշակել «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման և զարգացման արդյունավետ ռազմավարություն, սովորողների առողջաբանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը համապատասխան ընթացակարգեր՝ հստակեցնելով առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման մանկավարժական տեխնոլոգիաները:

4. Մշակված «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման և զարգացման արդյունավետ ռազմավարության արդյունավետությունը ստուգել մանկավարժական գիտափորձի ընթացքում:

Չետագոտության մեթոդաբանական հիմքում ընկած են մանկավարժական, հոգեբանական, հասարակաբանական, հոգեվերլուծական հայեցակարգերը, մասնավորապես՝ դպրոցի կառավարման ընդհանուր տեսությունը (Ս. Ա. Մովսիսյան, Լ. Թ. Ասատրյան, Ա. Ս. Կարապետյան), կրթության քննադատական տեսությունը (Ադորնո, Չորքհայմեր, Չաբերմաս), համագործակցային մանկավարժության հայեցակարգը (Ջ. Դյուի, Շ. Ա. Ամոնաշվիլի), ընդհանուր համագիտական ուսումնասիրության (Ի. Վ. Բլաուբերգ, Է. Գ. Յուդին), գիտական հետազոտության (Գ. Պ. Շեդրովիցկի), մանկավարժական կարգային-հասկացական ապարատի, մանկավարժության մեթալեզվի վերլուծության (Ի. Կ. Կարապետյան), տեսական և մեթոդաբանական մոտեցումները:

Չետագոտության մեթոդները:

Չետագոտության ընթացքում և նրա արդյունքներն ամփոփելու և շարադրելու համար կիրառվել են թեմային առնչվող փիլիսոփայական, մանկավարժական, հասարակագիտական, կոնֆլիկտաբանական գրականության վերլուծության, ինչպես

նաև վերլուծության և սինթեզի, կադապարման, ընդհանրացման և համակարգման, տեսական և գիտափորձարարական ուսումնասիրության, հանրահոգեբանական հետազոտությունների, մասնակիցների վարքագծի վերլուծության, հարցման, անկետավորման մեթոդները:

Չետազոտության հիմնական փուլերը.

Չետազոտությունը կատարվել է շուրջ 5 տարի:

Առաջին փուլում (2006-2007թթ.) ընտրվել է հետազոտության թեման, որոշվել նպատակը և խնդիրները: Ուսումնասիրվել և տեսական վերլուծության է ենթարկվել հետազոտության հիմնահարցին վերաբերող մանկավարժական, հոգեբանական, առողջաբանական գրականությունը:

Երկրորդ փուլում (2007-2008թթ.) մշակվել են աշխատանքային վարկածը և ուսումնասիրության մեթոդները, կատարվել է աշակերտների աշխարհայացքի, առողջաբանական գիտելիքների կարծրատիպերի ուսումնասիրություն և վերլուծություն և ստացված արդյուքների ամփոփում:

Երրորդ փուլում (2009-2011թթ.) կատարվել է տեսական և գործնական ճանապարհով կուտակված նյութի գիտական վերլուծություն, համակարգում և ընդհանրացում:

Չետազոտության գիտական նորույթը.

- «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման և զարգացման գործառական և բովանդակային բնութագրերի բացահայտումն է՝ սովորողների ուսուցման և ուսումնառության, ընդհանուր կենսագործունեության տեսանկյունից:

- Առողջաբանական, կյանքի որակի մոտեցումների, մեթոդների, տեխնոլոգիաների վերլուծությունը և առողջ ապրելակերպի մշակույթի մանկավարժական պայմանների ձևավորմանը նպաստող ռազմավարության մշակումը:

Չետազոտության տեսական նշանակությունն այն է, որ «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման և զարգացման արդյունավետ մոդելը կարող է նպաստել սովորողների առողջ ապրելակերպի մշակույթի շարունակական ձևավորմանը, որի հիմքում ընկած են համապատասխան մանկավարժական, հոգեբանական, առողջաբանական գիտելիքներ:

Չետազոտության գործնական նշանակությունն այն է, որ ատենախոսության հիմնական դրույթները և եզրակացությունները կարող են հիմք հանդիսանալ դպրոցական դաստիարակչական համակարգում՝ համապատասխան ռազմավարության մշակման, նոր ծրագրերի կազմման, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման ժամանակ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Կրթական արժեքները մեծ նշանակություն ունեն մատաղ սերնդի առողջաբանական արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Ընդհանուր առմամբ, նրանք ածանցվում են ազգային, համամարդկային, հոգևոր, գիտակրթական արժեքներից:

2. Անհրաժեշտ է նախ մանկավարժական կադրերի ուսուցման հոգեբանական լուսավորության ավանդական մոդելից անցնել մանկավարժների հոգեբանական իրազեկության զարգացման մոդելին, որը թույլ կտա ավելի արդյունավետորեն լուծել երեխայի ուսուցման, դաստիարակության և զարգացման արդի խնդիրները:

3. Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման ինտերակտիվ-ինտեգրատիվ մոդելը դիմամիկ, բազմագործառույթ կառույց է, որը կրթական և դաստիարակչական առումով կարող է լինել արդյունավետ միջառարկայական կապերի շարունակական ապահովման պարագայում:

4. Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման մանկավարժական պայմանները հնարավոր է բարելավել, եթե ուսումնադաստիարակչական աշխատանքը իրականացվի ժամանակակից մանկավարժական, հեռահաղորդակցական տեխնոլոգիաներով՝ հաշվի առնելով կյանքի որակի գնահատման հայրենական և միջազգային չափանիշները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում է կիրառված հիմնադրույթներով, տեսականորեն և գործնականորեն հիմնավորվում է մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական և մեթոդական առանձնահատկություններին համապատասխան, հետազոտության արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

Հետազոտության հիմնական արդյունքները և դրույթները **փորձաքննության են** ենթարկվել ու հավանության են արժանացել Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնում, հետազոտության բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում:

Հետազոտության արդյունքները **ներդրվել են** Գյումրի քաղաքի բժշկական ուսումնարանում, թիվ 6, 11, 29, 31, 40 դպրոցներում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են չորս հոդվածներում (տե՛ս անվանացանկը ատենախոսության սեղմագրի վերջում):

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 125 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության վարկածը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Առաջին` «Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման մանկավարժական պայմանները» գլխում, քննության են ենթարկվում մանկավարժության առողջաբանական արժեքանության ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումները:

Ներկայացվում են հիմնախնդրի պատմությունը, հիմնական մանկավարժական մոտեցումները: Վերլուծվում են առողջաբանական արժեհամակարգի ձևավորման թե՛ հայրենական, թե՛ արտասահմանյան հայեցակարգերը:

Կարևորագույն խնդիր է առողջությունն ուսուցիչների և աշակերտների շրջանում որպես բարձրագույն արժեք ներկայացնելը և արմատավորելը: Առաջին պլան են մղվում հատկապես հումանիստական մոտեցումները: Շեշտադրվում է այն գաղափարը, որ անհրաժեշտ է շարունակաբար հումանացնել երեխաների կենսագործունեության միջավայրը: Ներկայացվում են առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման մանկավարժական նախադրյալները:

Դիտարկվում են առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման նախադրյալները ոչ միայն հիգիենայի, էկոլոգիայի, բժշկագիտության, այլև հոգեբանության, հոգեվերլուծության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների տեսանկյունից: Նշվում է, որ վալեոլոգիայի առաջացման հիմնական պատճառը սովորողների առողջության աստիճանական վատթարացումն էր: Այդ առումով դպրոցը մեծ դեր կարող է խաղալ թե՛ բժշկական նվազագույն գիտելիքների, թե՛ առողջարարական մտածողության և աշխարհայացքի, թե՛ պահանջվող ապրելակերպի կենսափիլիսոփայությունն ձևավորելու գործում:

Շատ մանկավարժներ պարզապես մոռանում են, որ ուսուցման և դաստիարակության հիմնական նպատակն առողջ, գեղեցիկ, կիրթ սերունդ դաստիարակելն է: Փաստորեն, առողջ սերունդ դաստիարակելու փոխարեն, շատ դեպքերում չափից ավելի ծանրաբեռնելով, կոնֆլիկտային իրավիճակները հարթելու փոխարեն այն սրելով, ժամանակին հոգեբանամանկավարժական օգնություն ցույց չտալով մանկավարժները բացասաբար են ազդում սովորողների առողջության վրա: Նշված պահանջներն ավելի են կարևորվում շուկայական տնտեսության, հարաբերությունների անցման

պայմաններում: Նախ և առաջ փոխվում է առողջապահության սոցիալական կադապարը: Մեծ կարևորություն է ստանում դպրոց-բուհ-արտադրություն կապի ապահովումը:

Բացասաբար կարող են ազդել դիդակտիկական տեսանկյունից սխալ կազմած դասացուցակները, ծրագրերը, ուսումնական նյութը և այլն: Վալեոլոգիան կարող է օգնել հաղթահարել նշված դժվարությունները:

Անհրաժեշտություն է առաջանում է մշակել առողջության վրա ուսուցման և դաստիարակության բացասական ազդեցությունները հաղթահարող մեթոդական համակարգ: Մի կողմից, խնդիր է դրվում պատրաստել վալեոլոգիական գիտելիքներով զինված ուսուցիչներ, մյուս կողմից, անհրաժեշտություն է առաջանում նույն գիտելիքներով զինել աշակերտներին: Ինչպես հայտնի է, մարդու կենսակերպը ներառում է երեք կատեգորիա՝ կենսամակարդակը, կյանքի որակը և կենսաոճը: Կյանքի մակարդակը սոցիալական կարգ է, որը ներկայացնում է մարդու պահանջմունքները բավարարելիս հարմարավետության աստիճանը: Կենսաոճը սոցիալ-հոգեբանական կարգ է, որը բնութագրվում է մարդու կենսակերպի առօրեական առանձնահատկություններով: Առաջին երկու կարգը հասարակական բնույթ ունեն: Կենսաոճը մեծ դեր է խաղում առողջ մարդ ձևավորելու գործում: Պատահական չէ, որ «առողջ ապրելակերպ» հասկացությունն ուղղակիորեն արտահայտում է կենսակերպի և առողջության անմիջական կապը: Ինչպես հայտնի է, վալեոլոգիայի առանցքային հասկացությունը «առողջ ապրելակերպն» է:

Հանգամանորեն վերլուծվում է «կյանքի որակ» հասկացությունը, որը երևան եկավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սկզբնապես նրանում ընգծվում էր այն միտքը, որ «լավ կյանքն ավելին է, քան նյութական լիությունը և բովանդակում է մի շարք գործոններ, ինչպիսիք են զբաղվածությունը, կենցաղը, շրջակա միջավայրը, առողջապահությունը, մշակույթը և այլն»:

Առանձնանցվում են կյանքի որակի սահմանման սկանդինավյան և ամերիկյան մոտեցումները: Եզրակացություն է արվում այն մասին, որ առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման կարևոր պայման է այնպիսի առողջաբանական արժեհամակարգի ձևավորումը, որտեղ առաջին պլան են մղվում հումանիստական արժեքները, որոնք ենթադրում են ոչ միայն ինքնասիրություն, այլև այլասիրություն: Երկու դեպքում էլ սերը դառնում է մարդու ֆիզիկական, հոգեկան և մտավոր առողջության գրավական:

Մարդուն սիրելու առաջին պայմանը նրա առողջության մասին հոգ տանելն է: Առողջ ապրելակերպի մշակույթը ենթադրում է հարգանքով վերաբերվել սեփական և այլ մարդկանց առողջությանը: Տարբեր մշակույթներում տարբեր առողջաբանական

արժեհամակարգեր են ընդունվում: Դա հաշվի առնելով, անհրաժեշտ է երեխաներին դաստիարակել հանդուրժողականության ոգով: Նշվում է, որ առողջաբանական արժեհամակարգի ձևավորման կարևոր գործոն է ավանդույթը: Ընդ որում, կան ավանդույթներ և սովորույթներ, որոնք առողջաբանության տեսանկյունից բացասական ուղղվածություն ունեն: Մյուս կողմից, անհրաժեշտ է տվյալ ավանդույթի շրջանակներում շեշտը դնել դրական միտումների վրա: Աշակերտները պետք է յուրացնեն ազգային առողջաբանական մոտեցումները, առողջարարական տեխնոլոգիաները գիտական, առօրեական մակարդակներում:

Բացահայտվում է, որ դպրոցականների առողջաբանական արժեհամակարգը ձևավորվում է տարբեր ներուսումնական և արտաուսումնական գործոնների ներգործությամբ: Հնարավոր չէ առողջաբանական արժեհամակարգի ձևավորման հիմնական գործոնները հաշվի առնել և կիրառել դաստիարակության բարդ գործընթացում, առանց նոր մեթոդաբանական մոտեցումների օգտագործման:

Կարևոր եզրահանգում է այն, որ ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում հնարավոր չէ աշխատանք ստանալ, հաջողության հասնել միայն գրագետ, բանիմաց, իրազեկ լինելով: Մասնագիտական տվյալների հետ մեկտեղ, ապագա մասնագետները պիտի ունենան մարմնի գեղեցիկ կառուցվածք, կազմվածք ու կեցվածք:

Երկրորդ՝ «Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման մանկավարժական մոդելը և նրա փորձարկումը դպրոցում» գլխում, առաջարկվում և հիմնավորվում է առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման ինտերակտիվ-ինտեգրատիվ մոդելը:

Նշվում է, որ «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման և զարգացման արդյունավետ մոդելը հաջողությամբ կիրառվել է Գյումրի քաղաքի բժշկական ուսումնարանում, թիվ 6, 11, 29, 31, 40 դպրոցներում: Գիտափորձի նպատակն է եղել հիմնավորել «Առողջ ապրելակերպ» ներառական դասընթացի կազմակերպման և զարգացման արդյունավետ մոդելի արդյունավետությունը:

Հաշվի առնելով նշված դպրոցների ուսումնական, դաստիարակչական պլաններն ու ծրագրերը՝ մշակվել են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներով դասերի անցկացման թեմաներ:

Մեծ տեղ է հատկացվել հատկապես առողջաբանական թեմաներով վավերագրական և գեղարվեստական ֆիլմերի դիտմանը: Ֆիլմերի և հեռուստատեսային ծրագրերի ընտրությունն իրականացնելիս, հաշվի է առնվել երկու սկզբունք՝ առաջին. տվյալ ֆիլմը կամ հաղորդումը պետք է ուղղակիորեն վերաբերի առողջաբանությանը, երկրորդ. ցանկացած ֆիլմի կամ հաղորդման դիտում իրականացնելիս, ուղղորդել երեխաներին,

որ առանձնացնեն առողջաբանական թեմատիկան: Կարևորվում է նախագծային մեթոդի կիրառումը, այն առումով, որ սովորողները ըստ նշված թեմայի ինքնուրույն գտնում են համապատասխան տեղեկատվություն և դասարանում քննարկում համադասարանցիների հետ: Կարևոր է այն, թե ինչպես հաշվի առնել բնագիտական և հումանիտար առարկայախմբի առանձնահատկությունները և կատարել թեմաների և խնդիրների միավորում:

Ուսուցման ընթացքում կիրառվել են տարբեր՝ ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ: Աշակերտները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ: Սողելի արդյունավետության կարևոր պայման է եղել համագործակցային խմբերի ստեղծումը: Աշակերտները պետք է հասկանան, որ խմբի աշխատանքի արդյունավետությունը կախված է խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումից:

Գիտափորձի ընթացքում կիրառվել են տարբեր փոքր խմբերով աշխատելու հնարներ՝ մտածիր-գույգ կազմիր-քննարկիր, որի էությունն այն է, որ «առաջին փուլում աշակերտները անհատապես մտածում առաջադրանքի շուրջ: Երկրորդ փուլում իրենց տեսակետը քննարկում են դասարանի աշակերտներից որևէ մեկի հետ: Երրորդ փուլում նրանք իրենց տեսակետը ներկայացնում են ամբողջ դասարանին»:

Տարբեր ինտերակտիվ մեթոդների և հնարների միջոցով անցկացվել են առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորմանը նպաստող դասեր:

Գիտափորձի տարբեր փուլերում կիրառվել է T-աձև աղյուսակը, որն օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Օրինակ, աշակերտները փորձարարական խմբերում տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների օգնությամբ անդրադառնում են T-աձև աղյուսակին, երբ իրականացնում են որևէ նախագիծ՝ կապված առողջության, առողջ ապրելակերպի, կյանքի որակի, դրանց վերաբերող խնդիրների հետ:

9-րդ դասարանի աշակերտներին փորձարարական խմբում առաջարկվել է առանձնացնել առավոտյան մարզվելու դրական և բացասական կողմերը, հաշվի առնելով մարդու կենսաբանական ներքին ժամացույցը:

Գիտափորձի հաջորդ փուլում աշակերտները ծանոթանում են m-աձև աղյուսակին, որը միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հարմար միջոց է: Օրինակ, աշակերտներին առաջարկվում է ցույց տալ իրենց վերաբերմունքը հումակերության նկատմամբ: Գյուճարով թիվ 40 դպրոցի 9-րդ դասարանի 36 աշակերտից 11-ն արտահայտվեցին կողմ, 18-ը՝ դեմ, և 5-ը՝ ձեռնպահ: 36 աշակերտից 18-ն

արտահայտվեցին կողմ, 11-ը՝ դեմ, և 5-ը՝ ձեռնպահ: Իսկ երբ նրանց առաջարկվեց հայտնել իրենց կարծիքը վիզանների կամ ոչ մի կենդանական ծագում ունեցող կերակուր ընդունելու և հագուստ հագնելու մասին, ապա տվյալները այսպիսին են՝ 36 աշակերտից 4-ն արտահայտվեցին կողմ, 29-ը՝ դեմ և 3-ը՝ ձեռնպահ:

Հասկացությունների քարտեզ (concepts map) հնարը նույնպես կիրառվել հետազոտության տարբեր փուլերում: «Քարտեզը» սկսում են կազմել հետևյալ կերպ: Նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը՝ օրինակ «Առողջ ապրելակերպ»: Այնուհետև առանձին «առողջ» հասկացության շուրջ գրի են առնվում ուղեկից բառեր՝ ասենք «ամուր», «տոկուն», «առնական» և այլն: Ապա նույն կերպ գրառվում են «ապրելակերպ» հասկացությանն առնչվող բառերն ու գաղափարները:

Քարտեզագրման ընթացքում առավելագույնս բազմաճյուղ պատկեր ստանալուց հետո սովորողներին առաջարկվում է պայմանական նշաններ օգտագործել, ինչպես ընդունված է ցանկացած քարտեզ կազմելիս: Այսպիսով, ընդգծվում են այն գաղափարները, որոնց շուրջ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն հավաքել: Ավելի արդյունավետ է «Խճանկար» (Jigsaw¹) մեթոդով աշխատանքը: Աշակերտներին տրվում է առողջաբանական թեմատիկայով խնդիրներ և միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Այս մեթոդի առավելությունն այն է, որ աշակերտները ուսումնասիրում են առողջ ապրելակերպի հիմնախնդիրը տարբեր տեսանկյուններից:

Ուսուցման հաջորդ փուլում կիրառվում է մտագրոհը (brainstorming), որը խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է:

Ձևավորող գիտափորձի անցկացման ընթացքում ուսումնասիրվել են 8-9 դասարանների «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հայ գրականություն», «Անգլերեն լեզու», «Ռուսաց լեզու», «Առողջ ապրելակերպ» առարկաների դասագրքերը և ուսուցչի ձեռնարկները: Նշված դասագրքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջության պահպանման հիմնախնդիրը դրանցում ուղղակիորեն արծածված չէ:

Առողջ ապրելակերպի հիմնախնդիրը լուծելու գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել՝ հաշվի առնելով միջառարկայական կապերը: Հետաքրքիրն այն է, որ էկոլոգիական խնդիրները քննարկման առարկա են թե՛ բնագիտական, թե՛ հումանիտար ուղղվածության դասընթացներում: Անգլերենի ուսուցման դասընթացներում հիմնականում հանգամանորեն ուսումնասիրվում են բժշկության, հիվանդությունների թեմաները: Նույնը վերաբերում է ռուսերենին: Ինչ վերաբերում է հայ գրականությանը,

¹Jig-saw puzzle – խճանկար:

ապա անհրաժեշտ է աշակերտներին հանձնարարել, որ նրանք տարբեր գրական կերպարների ուսումնասիրության ժամանակ, բացահայտեն առողջության հիմնախնդիրը, տեսնեն այն: Ինչպես հայտնի է, շատ հայ դասական գրողներ մահացել են վաղ տարիքում՝ տվյալ ժամանակաշրջանին բնորոշ որևէ հիվանդությունից: Աշակերտները կարող են քննարկել այդ հիմնախնդիրը, ցույց տալ, թե որոնք են նրանց հիվանդությունների պատճառները:

Անգլերենի ուսուցման ընթացքում նույն խնդիրը քննարկվում է՝ հաշվի առնելով անգլիացի գրողների կյանքն ու գործունեությունը: Ռուսերենի դասերին աշակերտները թվարկում են այն հիվանդությունները, որոնց պատճառով տառապել կամ մահացել են ռուս դասականները: Արդյունավետ է նաև թվարկել այն գրողների, գիտնականների անունները, որոնք երկար են ապրել, բացահայտել նրանց երկարակեցության կամ առողջության գաղտնիքը:

Այսպիսով, Գյունրի քաղաքի հինգ դպրոցի՝ թիվ 6,11,31, 29, 40, 8-րդ և 9-րդ դասարաններում մենք փորձարկել ենք առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման մանկավարժական մոդելը, որի էությունն այն է, որ հաշվի են առնվում միջառարկայական կապերը, ցանկացած թեմայի ուսուցման ժամանակ փորձ է արվում բացահայտել առողջաբանական խնդիրներ, ուսումնասիրվում են առողջաբանական խնդիրները ըստ տվյալ ուսումնական իրադրության, առողջությունը դիտարկվում է որպես գերագույն արժեք, որը ընկած է ոչ միայն առողջ ապրելակերպի, այլև մարդու կյանքի որակի, ճիշտ կենսակերպի, երջանկության հիմքում: Սողելի հիմքում ընկած հիմնական սկզբունքն այն է, որ չկան առարկաներ, որոնց ուսուցման ժամանակ հնարավոր չէ քննարկել մարդու ֆիզիկական, հոգևոր առողջության, առողջ ապրելակերպի հիմնախնդիրը:

Բավականին արդյունավետ կարելի է համարել 8-9-րդ դասարաններում կազմակերպած դասղեկի ժամերը՝ «ԳԶՕ» և «ՄԻԱՎ-ՉԻԱՂ-ի հիմնախնդիրը և գլոբալիզացիան» թեմաներով:

«ԳԶՕ» թեմայով դասերը հիմնականում անցկացրել են կենսաբանության և քիմիայի ուսուցիչները: Անգլերենից անցկացվել է հատուկ դաս՝ նվիրված «ԳԶՕ» հիմնախնդրի իրավական և էթիկական հայեցակետերին: Ամեն մի դաս-դասախոսության հետևել են ինտերակտիվ դասեր փոքր խմբերով, որոնց մասին խոսվեց վերը:

Ձևավորող դասերը փորձարարական խմբերում բավականին արդյունավետ էին, քանի որ աշակերտները պասիվ ունկնդրողի դերից անցնում էին ակտիվ մասնակիցների դերակատարության:

Ընդհանուր առմամբ կազմակերպվել են սեմինարներ տարբեր թեմաներով, որոնք

շոշափում են առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման հոգեբանական, էկոլոգիական, կրոնական, բժշկագիտական և այլ հայեցակետերը: Ընդհանուր առմամբ, առանձնանում են «ԳՁՕ», «Պահք», «Անորեքսիա», «Վիզանիզմ», «Մարդու ներքին կենսաբանական ժամացույց», «Առողջ և հիվանդ հայ գրական կերպարները» թեմաները:

Սույն մոդելի մյուս առանձնահատկությունն այն է, որ նշված հասկացությունների ուսուցումն իրականացվում է միջառարկայական կապերի ապահովման համատեքստում և այն իր բնույթով ինտեգրատիվ է: Մոդելը բազմաբնույթ է ոչ միայն թեմատիկ, այլև բովանդակային առումով: Հիմնական սկզբունքը, որն ընկած է սույն մոդելի հիմքում այն է, որ ցանկացած առարկա ուսուցանելիս, կարելի է այս կամ այն չափով շոշափել առողջության, առողջ ապրելակերպի, կյանքի որակի հիմնահարցերը: Ավելին, միայն այդպիսի մոտեցմամբ կարելի է ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ դեռևս դպրոցական մատարանից:

Երկրորդ սկզբունքն այն է, որ անհրաժեշտ է նոր թեմաներ ներառել՝ ավելի հետաքրքիր, երբեմն մեզ համար անսովոր, որոնք ավելի հետաքրքիր կդարձնեն ուսուցման գործընթացը:

Սույն մոդելի հիմքում ընկած երրորդ սկզբունքն այն է, որ առողջ ապրելակերպի մշակույթը լայն հասկացություն է և հնարավոր չէ այն դիտարկել մեկ առարկայի շրջանակներում: Ընդ որում, հումանիտար առարկայախումբը այդ առումով չի կարող համարվել ավելի անարդյունավետ:

Գիտափորձի հաստատող փուլում բացահայտվել է, որ թե՛ փորձարարական, թե՛ ստուգողական խմբերում աշակերտների առողջաբանական գիտելիքները բավարար չեն, դրանով իսկ հաստատելով ձևավորող գիտափորձի անհրաժեշտությունը: Հաշվի առնելով մանկավարժական գիտափորձի կազմակերպման առանձնահատկությունները, կարևոր էր բացահատել փորձարարական աշխատանքների կազմակերպման ընթացակարգերի մշակումը, ձևավորող գիտափորձի արդյունքների ճիշտ գնահատումը: Այդ նպատակով փորձաքննության սկզբում մշակվել է անկետային հարցման հարցաթեթիկ, որի նպատակն է եղել բացահայտել աշակերտների առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման սոցիալական և մանկավարժական պայմանները, հետազայում այն բարելավելու նպատակով:

Գյուլնի քաղաքի հինգ դպրոցում՝ թիվ 6, 11, 31, 29, 40, իրականացվել է հարցում՝ 8-րդ և 9-րդ դասարանցիների առողջաբանական մշակույթի ձևավորման մակարդակը պարզելու նպատակով:

Հետազոտության ավարտական փուլում նշված դպրոցներում, մենք ընտրել ենք

փորձարարական և ստուգողական խմբեր՝ 62/64 հարաբերակցությամբ: Փորձարարական խմբերում տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչներ փորձարկել են մեր կողմից ստեղծած առողջ ապրելակերպի ձևավորման մոդելը, որը ներառում է տեքստեր կամ ուսումնական նյութեր և համապատասխան առաջադրանքներ:

Փորձարարական աշխատանքի սկզբում և վերջում առաջարկվել են հարցեր, որոնց պատասխանները ցույց են տալիս, թե սովորական կամ ստուգողական և փորձարարական խմբերում ուսանողները ինչպես են յուրացրել առողջաբանական գիտելիքները:

Ըստ մշակված չափանիշների գնահատելով առողջ ապրելակերպին մղող իմացական դրդապատճառների ձևավորման մակարդակը, մենք հիմնավորեցինք այն դրույթը, ըստ որի՝ դպրոցը պետք է ոչ միայն պայմաններ ստեղծի առողջ ապրելակերպի կենսափիլիսոփայության և մշակույթի ձևավորման համար, այլև պետք է համագործակցի կյանքի որակի տեսանկյունից խնդիրներ ունեցող ընտանիքների հետ:

Փորձարարական խմբի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ձևավորող գիտափորձի ընթացքում դպրոցականները դրսևորում էին բարձր անձնային որակներ տարբեր պրոբլեմներ լուծելիս: Հատկանշական է այն, որ նրանք ամեն մի հիմնախդրի լուծում կապում էին իրենց անձնական կյանքի հետ: Այն հասկացությունները, որոնց հետ նրանք ծանոթանում էին առաջին անգամ, նրանց մոտ ոչ թե հիասթափություն, այլ ոգևորություն էր առաջացնում: Ինտերակտիվ մեթոդների և հնարների կիրառումը արդյունավետ էր ուսուցման բոլոր փուլերում:

Ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ փորձարարական խմբի դպրոցականները գիտափորձի վերջում ցույց տվեցին առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման միջոցների և եղանակների, ուսումնական և արտաուսումնական պայմանների դերի գիտակցման ավելի բարձր մակարդակ, քան ստուգողական խմբի աշակերտները:


Աղյուսակ 1.

ԳԻՏԱՓՈՐՁԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող հարցեր	Փորձարարկան խումբ		Ստուգողական խումբ	
	N – 62		N – 64	
	Մինչև փորձը	Փորձից հետո	Մինչև փորձը	Փորձից հետո
	(%-ով)	(%-ով)	(%-ով)	(%-ով)
1. ֆիզիկական դաստիարակությունն ի՞նչ դեր է խաղում	56	78	58	77
2. մտավոր դաստիարակությունն ի՞նչ դեր է խաղում	58	76	54	74
3. հոգևոր դաստիարակությունն ի՞նչ դեր է խաղում:	36	79	32	45
4. գրականությունը ի՞նչ դեր է խաղում	35	81	33	44
5. արվեստը ի՞նչ դեր է խաղում	30	78	33	45
6. գիտությունը ի՞նչ դեր է խաղում	59	77	59	73
7. ինքնակառավարումը ի՞նչ դեր է խաղում	25	75	27	39
8. ինքնագարգացումը ի՞նչ դեր է խաղում	26	78	26	41
9. հավատը ի՞նչ դեր է խաղում	29	88	25	42
10. սերը ի՞նչ դեր է խաղում	28	85	30	44

ԳԾԱՆԿԱՐ 1.

ԳԻՏԱՓՈՐՁԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Կատարված հետազոտությունների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Վալեոլոգիան կամ առողջաբանությունը սահմանային գիտություն է, որի հիմքում ընկած են ոչ միայն բժշկությունը, հիգիենան, ֆիզիկական կուլտուրան, ֆիզիոլոգիան և հոգեբանությունը, այլև արժեբանությունը, փիլիսոփայությունը, աստվածաբանությունը, հոգեվերլուծությունը և այլ ժամանակակից գիտությունները: Այն հանդիսանալով օբյեկտ մանկավարժական վալեոլոգիայի պիտի գտնվի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Վալեոլոգիական գիտելիքներով զինված ուսուցիչները ոչ միայն պիտի զբաղվեն իրենց առողջության հարցերով, այն առումով, որ ուսուցիչը պիտի լինի առողջ և՛ մարմնով, և՛ հոգով, այլև պիտի կարողանան ձևավորել աշակերտների մոտ առողջ ապրելակերպի մշակույթ:

2. ՌԴ-ն, Բելոռուսի և Ուկրաինայի փորձը կարող է ուսանելի լինել մեզ համար: Սակայն ՀՀ կրթական տարածքը ունի իր առանձնահատկությունները, և առողջարարական քաղաքականության ռազմավարությունը պիտի մշակվի՝ հաշվի առնելով մեր կրթական իրողությունները: Ըստ այդմ, մանկավարժական առողջաբանության առարկան ֆիզիկական, հոգևոր, մտավոր առողջ երեխայի դաստիարակությունն է, որի արդյունքում նրա մոտ ձևավորվում է առողջ ապրելակերպի մշակույթ:

3. Առողջության պահպանման, ամրապնդման հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել տվյալ մշակույթի և միջմշակութային հաղորդակցման և երկխոսության շրջանակներում: Համապատասխան հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումն ուղղակիորեն պայմանավորված է տվյալ երկրի պատմամշակութային, սոցիալական, էթնոհոգեբանական համապատասխան գործոնների ազդեցությամբ:

4. Մեծ է առողջապահական կարծրատիպերի դերը: Մի կողմից, գոյություն ունեցող կարծրատիպերը առողջության նկատմամբ կարող են խաղալ դրական դեր, մյուս կողմից, մեծ նշանակություն ունի բացասական կարծրատիպերի, ավանդական մոտեցումների հաղթահարումը՝ մանկավարժաան միջոցներով:

5. Մշակույթն ընդհանրապես, և առողջ ապրելակերպի մշակույթը մասնավորապես, լինելով փոփոկապակցված ձևավորվում են շատ դանդաղ, և միայն համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաների և ընթացակարգերի կիրառումը կարող է հանրակրթական դպրոցը դարձնել առողջ ապրելակերպի և նրա փիլիսոփայության ձևավորման դարբնոց:

6. Մանկավարժական առողջաբանությունը հիմնվում է թե՛ բնագիտական, թե՛

հասարակագիտական գիտափորձերի վրա: Կարևոր են ոչ միայն բժշկական-հիգիենիկ, այլև էկոլոգիական հետազոտությունները: Թե՛ համաշխարհային, թե՛ հայրենական դպրոցների պատմությունը ցույց է տալիս, որ առողջության հիմնախնդիրն իր արտացոլումն է գտել ոչ միայն տարբեր գիտակարգերում /մարդու անատոմիա, կենսաբանություն, էկոլոգիա, բժշկագիտություն, գենետիկա և այլն/, այլև հանրակրթական առարկաներում /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և այլն/:

7. Մանկավարժական առողջաբանության հիմնական խնդիրներից է ոչ միայն առողջ և կենսունակ սերունդ դաստիարակելը, այլև պատրաստել նրան ապագայում տարբեր անբարենպաստ սոցիալ-տնտեսական, հոգեբանական, կենսաբանական պայմաններում ապրելու և գոյատևելու համար:

8. Կարևորվում է ուսուցիչների և աշակերտների առողջաբանական գիտելիքների շարունակական զարգացման և հարստացման հարցը: Դրա հիմնական ուղիներից են. ա/ առողջաբանական ուղղվածություն ունեցող առարկաների հետևողականորեն ուսուցումը, բ/ միջառարկայական կապերի տեսանկյունից առողջաբանական հիմնախնդրի տարբեր ուսումնական իրադրություններում առանձնացումը, գ/ տվյալ հիմնախնդրի տարբեր տեսանկյուններից՝ կազմախոսական, բնախոսական, հոգեբանական, մանկավարժական դիտարկումը, առողջաբանական ուղղվածության դասերի կադապարումը:

9. Առողջ ապրելակերպի ձևավորման ինտերակտիվ-ինտեգրատիվ մոդելի կիրառումը հիմնական դպրոցում արտացոլում է առողջարարական տեխնոլոգիաների կիրառման համաշխարհային արդի միտումները, և այն կարելի է կիրառել տարբեր ուսումնակրթական հաստատություններում:

Ատենախոսության **հիմնական դրույթներն** արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Ի. Կ. Կարապետյան, Ն. Ա. Գալոյան, Վալենտինոգիական հայեցակարգի իրացումը դպրոցական մանկավարժության մեջ: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու / նոյեմբերի 7-9, 2007թ./ -Երևան: «Մանկավարժ», 2008թ., էջ 6-9:

2. Ն. Ա. Գալոյան, Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման

մանկավարժական պայմանները: «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, №7-8, Երևան 2011թ., էջ.23-29:

3. Ն. Ա. Գալոյան, Մանկավարժական վալեոլոգիայի առարկայի հիմնավորման հիմնախնդիրն արդի փուլում: «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, №7, Երևան 2011թ., էջ18-22:

4. Ն. Ա. Գալոյան, Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման ինտերակտիվ-ինտեգրատիվ մոդելը: «Մանկավարժական միտք» գիտամեթոդական ամսագիր, №1-2, Երևան 2013թ., էջ 199-206:

ГАЛОЯН НАИРА АТАБЕКОВНА
ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ФОРМИРОВАНИЯ ЗДОРОВОГО ОБРАЗА
ЖИЗНИ В СРЕДНЕЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- "Теория и история педагогики".

Защита состоится 25 октября 2013г. в 14⁰⁰ ч. на заседании специализированного совета педагогики 065 ВАК по присуждению ученой степени при Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52^а, ЕГУ, корпус факультета армянской филологии, аудитория 203.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Осознание роли здорового образа жизни имеет большое значение в интеллектуальном и духовном развитии человека. В рамках педагогической валеологии рассматриваются не только проблемы, имеющие отношение к воспитанию и обучению учащихся, но к улучшению здоровья населения. Именно в школе формируются основы организации здорового образа жизни. Не менее важным представляется проблема ознакомления с новыми оздоровительными технологиями.

В этом ракурсе подчеркивается значение развития валеологической компетенции у учителей. Важно, чтобы они сознательно, с четко аргументированных научных позиций подходили к проблемам здоровья среди учителей и учащихся.

Рассматривая здоровье как величайшую ценность, учителя должны воспитывать здоровое и красивое поколение. Принципиальное значение имеет, с учетом особенностей данного региона, разработать стратегию последовательного усвоения основных компонентов культуры здорового образа жизни в учебном процессе общеобразовательной школы, обеспечивая межпредметные и внутрипредметные связи, определяя пути и методы улучшения качества и содержания оздоровительно-ориентированных уроков, моделируя и проектируя их с новых методологических позиций.

Цель исследования. Выявить психологические и педагогические особенности интегративного курса "Здоровый образ жизни" и разработать четкую стратегию перманентного развития валеологических, экологических и психологических знаний у учащихся.

Задачи исследования:

1. Изучить современную педагогическую, физиологическую, медицинскую, валеологическую литературу о методах, процедурах организации интегративного курса

"Здоровый образ жизни".

2. Выявить теоретические и методологические основы интегративного курса „Здоровый образ жизни“.

3. Разработать четкую стратегию интегративного курса „Здоровый образ жизни“ и процедуры развития валеологических знаний у учащихся, определяя педагогические технологии формирования культуры здорового образа жизни.

4. Проверить продуктивность разработанной стратегии в процессе педагогического эксперимента.

Научная новизна исследования.

Представлены содержательные и функциональные характеристики интегративного курса "Здоровый образ жизни" с точки зрения образования и жизнедеятельности учащихся. Разработана стратегия формирования культуры здорового образа жизни на основании анализа подходов, методов и технологий развития культуры здорового образа и качества жизни.

Теоретическое значение исследования. Продуктивная модель организации интегративного курса «Здоровый образ жизни» может способствовать формированию культуры здорового образа жизни, в основе которых лежат соответствующие педагогические, психологические и валеологические знания.

Практическое значение исследования. Основные положения и выводы диссертационной работы могут стать основой разработки стратегий воспитания, составления новых воспитательных, образовательных программ в процессе воспитания учащихся, а также в курсах повышения квалификации учителей.

Апробация диссертации: апробация результатов исследования и внедрение их в практику осуществлялась в средних школах г. Гюмри #6, 11, 29, 31, 40.

Основные теоретические положения диссертации в виде докладов нашли отражение в 4 статьях.

Структура работы. Работа состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы, приложения.

GALOYAN NAIRA ATABEK
PEDAGOGICAL CONDITIONS OF FORMING THE
HEALTHY LIFESTYLE IN SECONDARY SCHOOL
REZUME

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 - "The theory and history of pedagogy".

The defense of the thesis will be held at 14⁰⁰ on September 2012 at the session of the Special Board 065 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Yerevan State University, address: 0025, 52^a, Abovyan st., Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N 203.

The actuality of the research. The awareness of the role of a healthy way of life is of great importance in the intellectual and spiritual development of schoolchildren. In the framework of pedagogical valeology it covers not only issues related to teaching schoolchildren, but also to improving the health of the population. The basis of a healthy way of life is formed in school. No less important is the problem of introducing new health improving technologies among students and teachers.

It emphasizes the importance of representing health as the most important value. From this point of view the importance of developing valeological competence of teachers is emphasized. It is important that they consider the problems of developing the culture of a healthy way of life from well-reasoned scientific grounds.

Considering health as the highest value, the teachers must educate healthy generation. It is very important, taking into account features of the given region, to develop a strategy for consistent implementation of the main components of a culture of healthy lifestyle in the teaching/learning process in a secondary school, providing cross-curricular and intradisciplinary ties, identifying the ways and means to improve the quality and content of health-oriented lessons, modeling and projecting them from new methodological positions.

The aim of the research is to identify the psychological and pedagogical features of the integrative course "Healthy Lifestyle" and to develop a clear-cut strategy for developing permanent valeological, environmental and psychological knowledge among students.

The objectives of research:

1. Examine contemporary educational, physiological, medical, valeological literature on the methods, procedures, organization of integrative course "Healthy Lifestyle".
2. Identify the theoretical and methodological foundations of integrative course

"Healthy Lifestyle".

3. Develop a clear-cut strategy for integrative course "Healthy Lifestyle" and procedures for developing valeological knowledge among students by implementing modern educational technologies in the process of fostering the culture of healthy lifestyle.

4. Check the efficiency of the developed strategy in the pedagogical experiment.

Scientific novelty of the research:

It presents content and functional characteristics of the integrative course "Healthy Lifestyle" in terms of education and student life. A strategy for building a culture of healthy lifestyle based on an analysis of approaches, methods and techniques of culture of healthy and quality of life.

The theoretical significance of the research.

Productive integrative model of organization of the course "Healthy Lifestyle" can help to foster a culture of healthy lifestyle, which is based on appropriate pedagogical, psychological and valeological knowledge.

The practical significance of the research.

Executive summary and conclusions of the thesis can be a basis for developing strategies for training, preparation of new educational programs in the education of students and in-service teacher training courses.

Exploration of research results.

The main points of the research were discussed at the sitting of the chair of pedagogy of State Pedagogical Institute after M. Nalbandyan.

The exploration of the results of the study was carried out and put into practice in in secondary schools in Gyumri # 6, 11, 29, 31, 40.

On the topic of the thesis were published four scientific papers.

The structure of the work. The work consists of an introduction, two chapters, conclusion, bibliography, appendices.

